



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃ

ԼՐԱՏՈՒ

Ի. տարի

Թիւ 1

Սիրելի բարեկամ,

2023-ը մեր հարիւրամեակի տարին էր: ԼՐԱՏՈՒ-ի հաւատարիմ ընթերցողները կամ դպրոցի Ֆէյս-պուքին կանոնաւոր հետետողները մանրամասն տեղեկացուեցան կատարուած ձեռնարկներէն, որոնց եզրափակումը եղաւ Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներուն Լոս Անճելըսի մէջ: Յաւերժական փառք յափտենական Տիրոջ, որ անկայուն կացութիւններու մէջ կրցանք իրականացնել մեր ծրագիրները: Շնորհակալութիւն բոլոր կազմակերպիչներուն, աջակիցներուն եւ մասնակիցներուն: «ՀԱԳ մեծ ընտանիք» արտայայտութիւնը ինքզինք փաստեց:

Տարին տագնապալի էր ի հայրենիս եւ մտահոգիչ՝ միջինարեւելեան ճակատի վրայ: Արցախը նաեւ միացաւ մեր պահանջատիրական ցանկին: Դիւրին չէ ձերբագատիլ կորուստին թողուցած զգացումներէն, բայց երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն հայոց կաթողիկոսին բառերով **հայրենասիրութիւն զգացումը հայրենաշինութիւն գործին ծառայեցնելու** ենք, մանաւանդ հիմա:

Լիբանան դեռ կը տարութերի աննաւապետ նաւու նման ինքզինք յանձնած ահագնացող ալիքներու:

ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ 100,000 ՏՈՒՄԻ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՆ

Դպրոցի գլխաւոր բարերար տիար Ռաֆֆի Մանուկեան տասը տարուայ ընթացքին մուծուելիք իր մէկ միլիոն տոլարի խոստումին առաջին յատկացումը՝ 100,000 տոլար փոխանցեց դպրոցին, որ պիտի գործածուի ուսուցչակազմի ընկերային յատկացումներուն:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք ազնիւ բարերարին:

Պատերազմի ձայները Պէյրութ չհասան, բայց հարաւ կ'արիւնի եւ թշնամին կը շարունակէ իր ոճիրը: Թէքէտանով փակենք մեր տարուան խոիր. «Տէր, բարութիւնդ այսօր, իմաստութիւնդ հիմա՛ պէտք է որկես աշխարհին... Թէեւ մոռցան անոնք քեզ, բայց յիմար հօտը մարդոց միմիայն դուն կեցնել կրնաս վիհի ճամբուն վրայ...»:




Merry Christmas & A Happy New Year!

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՄԱՆՈՐԵՒ ՕՐՀՆԱԲԵՐ Ս. ԾՆՈՒՆԴ

ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԷՋ

Սեպտեմբեր 22-ին ՀԱԳ հոգաբարձության ատենապետը, ՀԱԱ եկեղեցույցի հովիւր Եւ դպրոցի տնօրէնը մեկնեցան Միացեալ Նահանգներ, մասնակցելու համար Լոս Անճելըսի մէջ կազմակերպուած հարիւրամեակի տօնակատարութիւններուն: Օրին, այնտեղ կազմուած էր կազմակերպիչ յանձնախումբ, ատենապետութեամբ Լեւոն Պապիկեանի (2016-ի շրջ.): Խումբին մաս կը կազմէին նախկին աշակերտ Ժիրայր Ֆրունճեան, Դալար Հայտօսթեան (2016-ի շրջ.), Դալար Գազէզեան (2017-ի շրջ.), Ճորճ Մկրտիչեան (2016-ի շրջ.) եւ Նարեկ Տէրտէրեան (2016-ի շրջ.): Իբրեւ խորհրդատու իրենց որոշ ժամանակ օժանդակեց Թովմաս Տէօքմէճեան (1965-ի շրջ.): Յանձնախումբը ամբողջովին կը վայելէր ԱՀԱ ընկերակցութեան նեցուկը:

Ծրագրուած բոլոր ձեռնարկներն ալ կատարուեցան Sheraton Universal, Universal City պանդոկին մէջ եւ արձանագրեցին բացառիկ յաջողութիւն եւ ունեցան շատ դրական եւ խանդավառ արձագանգ, ըլլայ շրջանաւարտներէն ու նախկին աշակերտներէն, ըլլայ հիւրերէ եւ բարեկամներէ:



ՇՐՋԱՆԱԽՈՒՄՑՑ ՀԱՌԱՔ 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023

Պանդոկին գետնայարկ սրահին մէջ՝ աւազանին շուրջ, երեկոյեան Cheese and Wine-ի ընդունելութեան ներկայ էին աւելի քան 200 հարիւր շրջանաւարտներ, նախկին աշակերտներ եւ կարգ մը հիւրեր ու Աւետարանչականի ներկայացուցիչներ: Տարբեր նահանգներէ ու երկիրներէ ժամանած նախկին հայսքուլցիներու զգացումները ջերմ էին ոչ միայն իրարու, այլեւ Լիբանանին ու մանաւանդ դպրոցին հանդէպ: Անպաշտօն ելոյթ ունեցաւ տնօրէնը, որ Պէյրութի ողջոյնը փոխանցեց ներկաներուն եւ իր ուրախութիւնը յայտնեց անոնց ներկայութեան համար:

ԿՐԹԱԿԱՆ ԶՐՈՅՆԵՐ 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023

Շաբաթ առաւօտուն, մօտաւորապէս 50 ներկաներով կայացաւ բազմաձայն զրոյցներու շարք մը, որուն մասնակցեցան տիկնայք Սիւզի Օհանեան (Հայ աւետ. Մերտինեան վարժարանի տնօրէնուհի), Թամար Թիւֆեքճեան (ՄՏԿԿ Արեւմտեան թեմի կրթական համադրող), առցանց՝ դոկտ. Երուանդ Զօրեան (ՀԲԸՄ Հայկ. հեռավար համալսարանի հիմնադիր) եւ ՀԱԳ տնօրէնը: Առաջին զրուցավարն էր տիկնայ Օհանեան, երկրորդին՝ դոկտ. Իւրնէշլեան: Զրոյցներուն նիւթերն էին «Հայկական դպրոցներու միջեւ համագործակցութեան հեռանկարներ» եւ «Հայ դպրոցը տաս տարի ետք»:



Կ ԱԼԱ-ՃԱՇԿԵՐՈՅԹ
30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023

Շաբաթ, 30 Սեպտեմբերի երեկոյան ժամը 6:30-էն սկսեալ հիւրեր սկսան ժամանել պանդոկի ճաշկերոյթի շքեղ սրահը, ուր կը հիւրընկալուէին կազմակերպիչ յանձնախումբին, UAC եկեղեցիէն օգնական երիտասարդներու կողմէ: 240-ի շուրջ հիւրեր ներկայ էին ճաշկերոյթին: Նախորդ օրուան ընկերական ջերմիկ մթնոլորտը կը շարունակուէր նաեւ այստեղ, ուր յատուկ պատրաստուած պաստառին առջեւ կը նկարուէին նախկին դասընկերներ: Սահմանուած ժամուն ԱՄ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներով սկսաւ ճաշկերոյթի պաշտօնական բաժինը, ուր ընդմիջաբար խօսք առին Լեւոն Պապիկեան՝ կազմակերպիչ յանձնախումբին անունով, դոկտ. Արմէն Իւրնէշլեան, պարոնայք Զաւէն Խանճեան եւ Ներսէս Պաղտոյեան: Իրենց տեսագրուած պատգամները փոխանցեցին դոկտ. Զաւէն Մարրլեան եւ դոկտ. Նուպար Աֆէեան (որ անակնկալ այլ պարտաւորութեան մը հետեւանքով չկրցաւ անձամբ ներկայ ըլլալ):

Աղօթքները մատուցին վերապատուելիներ ժիրայր Ղազարեան եւ Սողոմոն Քիլաղպեան (1970-ի շրջ): Խօսք առնողները ներկայացուցին կազմակերպիչ մարմինի անդամները: Յատուկ յուշանուէրներով պատուեցան ՀԱԳ ԱՄՆ Արեւելեան ափի շրջանաւարտից միութեան նախկին ատենապետերը եւ երկարամեայ վաստակի տէր ուսուցիչներ:





100% ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈԼԵՃԻ ՊԱՔԱՆՈՐԵԱՅԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հայ աւետ. Գոլժճի պաքալորեայի զոյգ բաժններու քննութեան մասնակից բոլոր աշակերտներն ալ արձանագրեցին յաջողութիւն (2 շատ լաւ եւ 1 լաւ յիշատակութեամբ): Անոնք, ի շարս այլոց, պարգեւատրուեցան ՍԴՀԿ Տիրուկի ուսանողական երիտասարդական միութեան կողմէ, 24 Օգոստոս 2023-ին:



Աշակերտները եւ իրենց դաստիարակը՝ տիկին Անգիւն Օպէյոյ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԻ ՎԿԱՅԱԳԻՐ



Կը շնորհաւորենք հայերէնի ուսուցչուհի տիկին Զարմինէ Կանաչեան-Ասմինեանը, որ Շաբաթ, 23 Սեպտեմբեր 2023-ին Լիբանանի ամերիկեան համալսարանին մէջ (LAU), Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքի հովանաւորութեամբ մշակուած Լիբանանահայ վարժարաններու ուսուցիչներու վերապատրաստումի երկամեայ ծրագիրը ամբողջացնելու համար վկայուեցաւ համապատասխան վկայագրով:



ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հոկտեմբեր 27-ին նորակազմ Աշակերտական խորհուրդը, վարչապետութեամբ Դալար Տաքեսեանի (11-րդ), հանդիպեցաւ աշակերտներուն հետ, որոնց ներկայացուց իր ծրագիրը եւ լսեց անոնց առաջարկները:

Յաջողութիւն կը մտղթենք ԱԽ-ի անդամներուն, որ աշխատին յանուն աշակերտներուն բարօրութեան:



Աշակերտական ներկայացում.
Ճանաչանալը աշխարհի մշակույթներուն



Մանկապարտեզի
իրական թուրքակները



Ճանաչացում
«Համագգայինի»ի
գեղարունեստական
գործունեութիւններուն



Սուրճ՝ տնօրէնին հետ



Տարրալուծարանին մէջ գիտութեան դասը միշտ
աւելի հաճելի է




Food heroes



Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը 4 Յունիս 2023-ին Մոնթրեալի Փլազա Վոլարժ սրահին մէջ պաշտօնական ճաշկերոյթի մը ընթացքին, ի մէջ այլոց, Մեսրոպ Մաշտոցի անուան շքանշանով պատուած է Թորոս Պապիկեանը (1977-ի շրջ.), որ տարիներով տեղւոյն կիրակնօրեայ դպրոցին օգտակար եղած է:

ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարրլեան (1955-ի շրջ.) 6 Յուլիս 2023-ին, որպէս 55 տարի եւ անելի շրջանաւարտ, այլոց կարգին, Պէյրութի ամերիկեան համալսարանի նախագահէն յատուկ պատուանշան ստացաւ:



Դոկտ. Զ. Մարրլեանի 15-րդ գիրքը՝ *For the Armenian Cause* լոյս տեսաւ 20 Սեպտեմբեր 2023-ին, մեկնաստութեամբ ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ եւ դպրոցի բարերար Ռաֆֆի Մանուկեանի:

13 Յունիս 2023-ին *Ազգակի* Փինիկ սրահին մէջ վաստակաւոր եւ նուիրեալ ՀՄԸՄ-ականներու պարգեւատրումի հանդիսութեան պատուած հինգ անձերէն մին էր երկարամեայ նախկին աշակերտ Պետիկ Լոճիկեան, որ ստացաւ «Ծառայութեան շքանշան»:



Հայկազեան համալսարանի 9 Յուլիս 2023-ի շրջանաւարտներու վկայականաց բաշխման հանդիսութեան իր սրտի խօսքը արտասանեց Հայկազեանէն շրջանաւարտ, այժմ հոգաբարձու եւ Basco International հիմնարկութեան նախագահ Սերժ Պչաքճեան (1971-ի շրջ.):

Լոս Անճելոսի *Մասիս* շաբաթաթերթի խմբագիր Յարութեան (1971-ի շրջ.) Յունիս 2023-ին Թանգանիոյ Քիլիմանճարօ լեռան գագաթը (5895 մետր բարձր) բարձրացած է:



Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի կազմակերպած «Արամ Խաչատուրեան-120» միջազգային գիտաժողովին (Սեպտեմբեր 12-14), Լիբանանի ֆիլհարմոնիք նուագախումբի ղեկավար՝ Կարօ Աւետեան (1998-ի շրջ.) զեկուցած է «Արամ Խաչատուրեանի ստեղծագործական գործունէութեան լիբանանեան էջը» նիւթը:

Վիզէն Իզնատոսեան (2012-ի շրջ.) Ֆլորիտայի համալսարանէն Յուլիս 2023-ին ստացած է PhD կոչում՝ Plant Pathology ճիւղին մէջ:

Տիկ. Շողակ (ծն. Վարժապետեան) Յովհաննէսեանի (1963-ի շրջ.) գլխաւորութեամբ Նիւ Եորքի Էջմիածնական առաջնորդարանի մշակութային յանձնախումբը 20 Սեպտեմբեր 2023-ին նշած է Հայաստանի անկախութեան տարեդարձը, ինչպէս նաեւ երգահաններ Արամ Խաչատուրեանի ծննդեան 120-րդ եւ Սերկէյ Ռախմանինովի 150-րդ տարեդարձները, մասնակցութեամբ Միտաթլանթիք Ֆիլհարմոնիք նուագախումբին:

Տիկ. Շողակ Յովհաննէսեան եւ Տիկ. Սեդա (ծն. Լոշխաճեան) Նալպաստեան (1964-ի շրջ.) համաստեմապետներն են AMAA-ի Նիւ եորք-Նիւ Ճըրզի շրջանի Որբերու եւ մանկանց հոգատարութեան յանձնախումբին:




Դոկտ. Վահրամ Շեմնասեան (1969-ի շրջ.) իբր AMAA-ի վարչական, մաս կազմած է Ընկերակցութեան Արժանքին, Ուրուկուէյ եւ Պրագիլ այցելած պատուիրակութեան: Իսկ 28 Յունիս 2023-ին ան Երեւանէն հեռակայ կերպով զեկուցեց «Մուսա լեռան հայերու փոխակերպումները» նիւթին շուրջ, Հայկազեան համալսարանի կազմակերպած գիտաժողովին, ինչպէս նաեւ հեռակայ կերպով 12 եւ 30 Հոկտեմբեր 2023-ին մասնակցած է Արամ Ա. կաթողիկոսի նախագահութեամբ արցախեան հարցին յատկացուած նիստերուն:

ՀՄԸՄ-ի ընդհ. ժողովը (Երեւան, 2 – 7 Հոկտեմբեր 2023) ընտրած է 2023 – 2027-ի կեդր. վարչութիւն, որուն անդամներէն երկուրը ՀԱԳ-էն են՝ երկարամեայ նախկին աշակերտ եւ դպրոցի բա-



րերարներին Հրաչ Միսեռեան (Ֆրանսա) եւ Վիզին Արելեան (ԱՄՆ) (1977-ի շրջ.):

19 Հոկտեմբեր 2023-ի ՀՅԴ բիրոյի հաղորդագրութենէն կ'իմանանք, թէ ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի համախոհական եօթը հոգինոց կեդր. կոմիտէի անդամ նշանակուած է Հրայր Պալեան (1966-ի շրջ.):



Հայ օգնութեան միութիւնը իր 73-րդ պատգամատրական ժողովին, որ տեղի ունեցած է 16 – 20 Հոկտեմբեր 2023-ին Հայաստանի մէջ, 11 անդամ



հաշուող կեդրոնական վարչութեան անդամ ընտրուած է տիկ. Նայիրի (ծն. Աղաճանեան) Պալանեանը (1971-ի շրջ.) ԱՄՆ-ի Արեւելեան ափին:

Ճինիշեան յիշատակի ձեռնարկը 15 Հոկտեմբեր 2023-ին «Յիշատակի եւ աղօթքի օր» մը կ'ազմակերպեց Նոր Մարաշի Հայ անտ. եկեղեցիին մէջ: Նշուեցան հիմնադիր Վահրամ Ճինիշեանը, տնօրէններ Հայկ Թիլպեանը եւ Սեդա (ծն. Թաշճեան) Փամպուրեանը (1969-ի շրջ.): Խօսք առնողներուն մէջ էր հաստատութեան նախկին տնօրէն Փոլին Սաղրրեան (1972-ի շրջ.):



ՆՇԱՆՏՈՒՔ

Զաւէն Լեփեճեան (2012-ի շրջ.) 10 Սեպտեմբեր 2023-ին նշանուած է օրդ. Լուսա Հաժժարի հետ, Պէյրութ:

ՊՍԱԿ


Սեւակ Քեարենեան (2007-ի շրջ.) 7 Հոկտեմբեր 2023-ին պսակուած է օրդ. Նարա Կապրիէլի հետ, Ս. Նշան մայր եկեղեցիին մէջ, Պէյրութ:



† 12 Նոյեմբեր 2023-ին ՀԱԳ-ի 1968 – 1975 տարիներու բնագիրութեան այցելու ուսուցիչ եւ Գիրութեան բաժանմունքի արեւնասպետ բառարանագէտ **ԼԵՒՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ** (1934 – 2023) մահացած է Վիեննայի մէջ:




† 1972 – 1975-ի քիմիագիրութեան այցելու ուսուցիչ ղեկագործ **ԳԵՈՐԳ ԳԵՈՐԳԵԱՆ** (1945 – 2023) մահացաւ Պէյրութի մէջ, 11 Հոկտեմբեր 2023-ին:



† 1964-ի շրջանաւարտ, Լոս Անճելոսի Ազգ. նահապակաց-Ֆերահեան վարժարանի գրադարանասպետուհի **ՀՈՒՐԻԿ ՏԷՄԻՐՃԵԱՆ** (1942 – 2023) մահացած է 22 Սեպտեմբերին, Լոս Անճելոսի մէջ:



† 1970-ի շրջանաւարտ, Շամլեան-Թաթիկեան վարժարանի նախկին ընդհ. հերթապահ **ՄԿՐՏԻՉ ԹԵՐԶԵԱՆ** (1952 – 2023) մահացած է 11 Սեպտեմբերին Պէյրութի մէջ:



† 1962-63 եւ 1964-65 ՀԱԳ-ի նախկին ուսուցչուհի տիկ. **ԼՈՒՍԱԾԻՆ ԳԱՐԼՈՋԵԱՆ-ԹԱԳԱՒՈՐԵԱՆ** (1933 – 2023) մահացած է Ազունիէի Ազգ. բուժարանին մէջ 18 Մայիս 2023-ին:



† Յապաղումով տեղեկացանք, թէ 1963-ի շրջանաւարտ առեւտրական **ԼԻՊԱՐԻՏ ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ** (1944 – 2023), ԱՄՆ-ի մէջ մահացած է 9 Դեկտեմբեր 2022-ին:

ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ

- 2005-ի շրջանաւարտ Յակոբ Գէորգեան եւ կինը բախարատրուած են երկրորդ զաւակով մը՝ Գէորգ, 3 Սեպտեմբեր 2023-ին Մոնթրէալի մէջ:
- 2007-ի շրջանաւարտ Վարանդ Բիրքճեան եւ կինը բախարատրուած են առջինէկ մանչ զաւակով մը՝ Ալեքսանդր, 22 Օգոստոս 2023-ին Լոս-պոնի մէջ:

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Բոլոր նուիրատուութիւնները կանխիկ տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

100 ԱՍԵԱԿ-Ի ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Շար.)

Դոկտ. Չ. Մաըրլեանի «Ապրող Էջեր Անցեալէն» գիրքի վաճառքէն	10
Կալա ճաշկերոյթի մի ոմն	50

ՄԱՀԱԵՄ-ԷՆ

HEKS Լիբանանի դպրոցներու օգնութիւն	2900
------------------------------------	------

ԱՄԱԱ-ԷՆ

2022-2023-ի հաշուոյն

Դ. եռամսեակի կրթաթոշակի յատկացում	3375
Դ. եռամսեակի նորոգութիւններու յատկացում	2500
Անմիջական օժանդակութիւն Դ. եռամսեակի	3392
Ստեփան Փիլիպոսեան ֆոնտէն	7664

2023-24-ի հաշուոյն

Ա. եռամսեակի յատկացում	550
Endowment fund, Ա. եռամսեակ	13826
Դպրոցին եւ ուսուցչաց յաւելեալ օժանդակութիւն	4818

ԱՄԱԱ-Ի ՄԻՋՈՑԱԲ

Շրջանաւարտ Վիգէն Գրաճեան (ԱՄՆ, տարեկան յատկացումի հաշուոյն)	2500
Շրջանաւարտ Առնոլտ Պապիկեան (ԱՄՆ)	1000
Շրջանաւարտ Հայկ Կիլլեսերեան (Մեքսիքո)	500
Շրջանաւարտ Յարութ Մեսրոպեան (ԱՄՆ, 2 յատկացումով)	550
Նախկին ուսուցչուհի տիկ. Անայիս Պարսումեան (ԱՄՆ)	500

ԱՅԼ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջ.ներ Տէր և Տիկ. Յովիկ եւ Սիլվիա Ներսեսեան (Աթէնք)	2500
Նախկին աշակերտ Ալէն Գրազիրեան (ԱՄՆ), ՀԱԳ այցելութեան առիթով	1000
Ծնողք տիար Թոնի Սամահա	1000

ՀԲԸՄ-Ի ՉԱԲԵՆ ՄԱՐԸԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Պատուակալ տնօրէնի փափաքով յատկացուած դպրոցի կրթանպաստի ֆոնտին	2500
---	------

ԴՈԿՏ. ՉԱԲԵՆ ՄԱՐԸԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ

*Ողբ. Գեորգ Գեորգեանի ընտանիքին փափաքով՝
փոխան ծաղկեպսակի եղան հետեւեալ նուիրատուութիւնները*

Արապեան ընտանիք	100
Ղեւոնդ եւ Լիտիա Պաղտասարեան	50
Էրիք եւ Թալին Ալահվերտեան	50
Տիկ. Սօսի եւ պր. Արմէն Պալեան	5 միլիոն լ.ն.
Տիարք Հայկազ եւ Հրաչ Եարսումեան	2 միլիոն լ.ն.
Տէր եւ տիկ. Կարօ եւ Վերժին Աբրահամեան	1 միլիոն լ.ն.
Սիլվա, Անի եւ Թամար Սեդրակեան	400,000 լ.ն.

ՀԱԳ-Ի ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՖՈՆՏԻՆ

Տիկ. Սիրվարդ Ֆրանկիլեան	100
<i>Նաեւ՝ տոքթ. Ճոն Թոմաս Փուլչիճեանի յիշատակին</i>	100
Մի ոմն	15
ՀԱԳ-ի անձնակազմ՝ ողբ. Լուսին Սերմանուկեանի յիշատակին	3,600,000 լ.ն.

Ը
 նդառաջելով ՄԱՀԱԵ Միութեան կողմէն ՀԱԳ-ի անձնակազմը եւ աշակերտներ հանգանակեցին 11,076,000 լ.ն. եւ \$402՝ Արցախէն Հայաստան տեղափոխուած անձերու օժանդակութեան համար:

Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱԵՇԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՐ ՆԵՐՍԵՆ ՊԱՐՏՈՅԵԱՆ
 ՏԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՅԵԱՆ
 Էջադրում՝ ԱՆԻ ՔԵՍԵՆԵԱՆ ՊԱՍԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՌԻՅԵԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College